հայոց և 'ի ծնունդ հայաստանեաց, հաւատացեալ 'ի Քրիստոս աւանդութեամբն սրբոյ Եկեղեցւոյ հայաստանեաց այրք հեզ, երկայնամիտք, տէր պատուոյ և սիրող ազգին և աշխարհին հայոց, և ինքեանք առաքինութեամբ զարդարեալք քաջախոհեան կերպ և այն, և 'ի վերայ սոցայ վիճակս հանել թուաւ միով մինչև երեքտասանեւորդ 'ի վերայ որում ելցէ վիճակն թիւ առաջին նա լինիցի նախարար, և որում ելցէ վիճակ երկրորդ նա երկրորդ խորհրդակից, մինչև 'ի վերջ երեքտասանեւորդ վիճակն վերջին խորհրդակից, և տունն հայոց պատուեսցէ սոցայ նամակօք պաշտօնի նախարարութեան ժամանակաւ երիս ամաւ, և խորհրդակցաց ժամանակաւ զամենայն աւուրս կենաց իւրեանց ըստ Օրինօք հայաստանեաց։

ԳԼՈՒԽ Ծ.

Վիճակ Նախարարութեան եթէ ելցէ 'ի վերայ տանուտէրի ոմն նա որում աշխարհի փոխանորդաց որ իցէ, յետս դարձուցանիցէ նամակ տանուտէրութեան իւրոյ, փոխանակ տեղի իւր պաշտօն տանուտէրութեան տացի ընկերի իւրոյ որում սպասէր պաշտօն իշխանութեան, և նախարարս մնասցէ տեղի պաշտօնի իշխանութեան, որ 'ի ամենայն աշխարհէ մնալով լիքն տանուտէրօք։